Հայորդը նվիրվում է 1988-ի երկրաշարժի
հայրենակցի անմեղ զոհերի հիշատակին

Յոթնագմբե՛թ քաղաք, դու դեմք ես,
որը հնարավոր չէ փոխել որևէ ներկով ու դիմածեփով:
Դու քո բնակիչների ինքնագիտակցությունն ես,
ավելի ճիշտ, դու քո ժողովուրդն ես...
Ինչի՞ց էլ սկսենք, միևնույնն է, մեր խելքամաղը քեզնից է սկսվում...
Քեզ հետ, քո ներսում ինքնախորացման վտանգն ընտրյալ լինելու գին է:
Դու ուժեղի ընտրությունն ես:
Քո պատկերով արժե ոսկեդրամ կտրել:
Եղավ, որ տարերքը քեզ իր ծոցն առավ.
դու ձայնակցեցիր ավեր Անիին, բայց չասացիր զուլումի խոսքեր.
-Ես քաղաք եմ, բնակիչ եմ փնտրում:
Որովհետև քո որդիները երբեք չհեռացան՝
բախտիդ անիվը տարաշխարհում պտտեցնելու...
Դու կոլորիտ ես: Քո անունն ավանդույթ է, ժառանգություն, վստահություն
նրանց համար, ովքեր սիրում են քեզ, ովքեր կորցրել են, բայց վերադառնում են
դեպի քեզ, որովհետև ի սկզբանե դու ես, քաղա՛ք...

Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ